«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐ

ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ՎԱՉԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սարալանջ գյուղը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ համայնքում՝ Փամբակ գետի ձախ ափին: Գյուղը հիմնադրվել է 1831 թվականին, իսկ Սարալանջ վերանվանվել է 1946 թվականի ապրիլի 26-ին: Գյուղի առաջին բնակիչները հարևան Մեծ Պարնի գյուղից տեղափոխված ընտանիքներն էին: Գյուղի բնակչության առավելագույն թիվը եղել է 1940-ական թվականներին և կազմել է 585 մարդ: 2011 թվականի մարդահամարի արդյունքներով գյուղի մշտական բնակչությունը կազմել է 188 մարդ, առկա բնակչությունը՝ 139 մարդ, որը վերջին 10 տարիների ընթացքում արձանագրել է էլ ավելի նվազման միտում: Գյուղն ունեցել է ութամյա կրթությամբ դպրոց, իսկ ներկայումս այն հիմնական դպրոց է: 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով քանդվում է գյուղի դպրոցը: Այդ ժամանակաշրջանում երեխաները իրենց ուսումը շարունակում են ստանալ գյուղի ունևորներից մեկի տանը: Որոշ ժամանակ անց Օրենբուրգ քաղաքի կողմից գյուղում սկսում են շինարարական աշխատանքներ, որի ընթացքում կառուցվում է նաև դպրոցի համար նոր շենք: Դպրոցի կառուցումից հետո աշակերտները իրենց ուսումը շարունակում են ստանալ դպրոցի նոր շենքում: Դպրոցն իրականացնում է տարրական և հիմնական հանրակրթական ծրագրեր, որից հետո աշակերտներն իրենց ուսումը շարունակում են մարզի այլ ուսումնական հաստատություններում:

Դպրոցի լրիվ հայերեն անվանումը՝ «ՀՀ Լոռու մարզի Սարալանջի Հ. Թումանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (զարգացման ծրագրում այսուհետ՝ դպրոց):

Դպրոցն անվանակոչված է հայ մեծանուն բանաստեղծ, արձակագիր, գրական, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի անունով:

Դպրոցի բակում կառուցված է հուշաքար՝ նվիրված Սարալանջ գյուղի բնակիչ Գառնիկ Սարուխանյանին, ով զոհվել է 1994թ. Արցախյան առաջին պատերազմի ժամանակ:

Դպրոցի կազմակերպաիրավական ձևը 2003թ. հունվարի 24-ից փոփոխվել է պետական ոչ առևտրային կազմակերպության, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 90.210.00381, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 06802548:

Դպրոցի գործունեություն է իրականացնում ՀՀ Լոռու մարզ, գյուղ Սարալանջ, 2-րդ փողոց, 1-ին շենք հասցեում: Դպրոցը մարզային ենթակայության է:

Դպրոցի պաշտոնական կայքը՝ https://saralanj.schoolsite.am/:

Դպրոցի շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 252.0 քառակուսի մետր, իսկ հողամասի մակերեսը 0.538 հա: Դպրոցի շենքը մեկ հարկանի է:

Դպրոցն ըստ լիցենզիաների իրականացնում է հետևյալ հանրակրթական ծրագրերը՝

Հ/Հ	Կրթական ծրագիրը	Կրթության ձևը	Սահմանային թիվը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Ավարտական փաստաթուղթ
1	Տարրական /լիցենզիա Ա0902, տրված 05.12.2012թ./	Առկա	12	4 տարի	Գրական հայերեն	Տեղեկանք
2	Հիմնական /լիցենզիա Ա0895, տրված 05.12.2012թ./	առկա	49	5 տարի	Գրական հայերեն	Վկայական

Դպրոցում սովորողների թիվը 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 11 /տասնմեկ/ աշակերտ, իսկ դասարանների թիվը՝ 5 /հինգ/ դասարան:

Դպրոցի աշխատանքային ռեժիմը միահերթ է, իսկ աշխատանքային շաբաթը՝ հնգօրյա:

1. ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի շենքի կառուցվել է 1989 թվականին: Այն մեկ հարկանի կառույց է ընդհանուր 252,0 քառակուսի մետր մակերեսով, և նախատեսված է մինչև 65 սովորողների համար:

Դպրոցի շենքում պարբերաբար իրականացվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ և շենքն ընդհանուր առմամբ գտնվում է բարվոք վիճակում:

Դպրոցում առանձնացված են հետևյալ տարածքներն ըստ համապատասխան մակերեսների՝

1. Նախասրահ – 4,2 քառակուսի մետր,
2. Միջանցք – 31,8 քառակուսի մետր,
3. Դասասենյակներ 9 հատ – 118,9 քառակուսի մետր
4. Ուսուցչանոց – 31,8 քառակուսի մետր,
5. Սանհանգույցներ 2 հատ – յուրաքանչյուրը 1,8 քառակուսի մետր,
6. Պահեստային տարածք – 5 քառակուսի մետր,
7. Աշխատանքային կաբինետներ թվով 4 հատ – ընդհանուր 35,5 քառակուսի մետր,
8. Գրադարան – 11 քառակուսի մետր,
9. Ճաշարան – 12 քառակուսի մետր:

2021 թվականին Միավորված ազգերի կազմակերպության աջակցությամբ վերանորոգվել է դպրոցի ճաշարանը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
Դպրոցում առկա է մշտական խմելու ջուր	Դպրոցում չկա մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ
Սանհանգույցներն առանձնացված են տղաների և աղջիկների համար	Բացօթյա սպորտային հրապարակը անմխիթար վիճակում է
Դպրոցում անցկացված է կենտրոնացված ջեռուցման համակարգ, ջեռուցումն իրականացվում է գազով	Դպրոցի միջանցքները չեն ջեռուցվում

Դպրոցի տարածքը ցանկապատված է, ապահովված է սովորողների անվտանգությունը	Հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար հարմարեցումները մասնակի են
Դասասենյակներում ապահովված է անհրաժեշտ լուսավորություն	
Առկա է տարհանման պահուստային ելք	
Դպրոցի ճաշարանը վերանորոգված է	

2. ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում առկա գույքը և գույքի վիճակը բավարար են ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Վերջին տարիներին նոր գույքով համալրվել է միայն ճաշարանը, մասնավորապես Միավորված ազգերի կազմակերպության կողմից որպես աջակցություն 2021 թվականին դպրոցին նվիրաբերվել է 1 /մեկ/ հատ էլեկտրական ջրատաքացուցիչ, 1 /մեկ/ հատ սալօջախ, 1 /մեկ/ հատ լվացարան, 1 /մեկ/ հատ կենցաղային կշեռք, 1 /մեկ/ հատ սառնարան, 2 /երկու/ հատ դարակաշար, 1 /մեկ/ հատ աշխատանքային սեղան:

Դպրոցը համալրված է որոշակի համակարգչային սարքավորումներով, որի բացվածքը և վիճակը ներկայացված է զարգացման ծրագրի 6-րդ բաժնում:

Դպրոցի գրադարանը համալրված չէ ժամանակակից գրականությամբ:

Դպրոցում բացակայում են լաբորատոր սարքավորումներ և նյութեր:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
Գործում է գույքով հագեցած ճաշարան	Դպրոցի գրադարանը համալրված չէ ժամանակակից գրականությամբ
Առկա են համակարգչային սարքավորումներ	Դպրոցում բացակայում են լաբորատոր սարքավորումներ և նյութեր
Գույքի վիճակը գնահատվում է բավարար	Դպրոցում սպորտային գույք գրեթե առկա չէ

3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, միացյալ է և միաժամանակ իրականացնում է 3 /երեք/ ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարումը՝

1. «ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
2. «ՀՀ Լոռու մարզի Խնկոյանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ,
3. «ՀՀ Լոռու մարզի Սարալանջի Հ. Թումանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ:

Կոլեգիալ կառավարման մարմինն ունի հետևյալ կառուցվածքը, որը հաստատվել է 2022 թվականի հուլիսին կառավարման խորհրդի նիստում՝

Հ/Հ	Ազգանուն, անուն	Կրթությունը	Առաջադրող	
			Մարմինը	Հաստատությունը
1	Քերոբյան Լուսինե	Միջին մասն.	Մանկ. խորհ.	Խնկոյանի դպրոց
2	Մանուկյան Աստղիկ	Միջին մասն.	Մանկ. խորհ.	Խնկոյանի դպրոց
3	Համբարձումյան Վարուժան	Միջին մասն.		Խնկոյանի համայնքապե-տարան
4	Սարկիսով Սեմյոն	Միջին մասն.	Ծնող. խորհ.	Խնկոյանի դպրոց
5	Ղազարյան Բագրատ	Միջին մասն.	Ծնող. խորհ.	Խնկոյանի դպրոց
6	Եղիկյան Հասմիկ	Բարձր.	Մանկ. խորհ.	Լուսաղբյուրի դպրոց
7	Մակարյան Նելլի	Բարձր.	Մանկ. խորհ.	Լուսաղբյուրի դպրոց
8	Աֆրիկյան Աննա	Միջնակարգ	Ծնող. խորհ.	Լուսաղբյուրի դպրոց
9	Սարգսյան Ռոզա	Միջնակարգ	Ծնող. խորհ.	Լուսաղբյուրի դպրոց
10	Եղիազարյան Նարինե	Բարձր.	Մանկ. խորհ.	Սարալանջի դպրոց
11	Քալաշյան Տաթև	Բարձր.	Մանկ. խորհ.	Սարալանջի դպրոց
12	Զաքարյան Ազգուշ	Միջնակարգ	Ծնող. խորհ.	Սարալանջի դպրոց
13	Խաչատրյան Սեդա	Թերի բարձր.	Ծնող. խորհ.	Սարալանջի դպրոց

14	Գևորգյան Վիլիկ	Միջին մասն.		Սարալանջի համայնքապե-տարան
15	Ղևոնդյան Գոհար	Բարձր.		ԿԳՄՍՆ
16	Գյոկչակյան Տիգրան	Միջին մասն.		ԿԳՄՍՆ
17	Նահապետյան Մարինե	Բարձր.		Լուսաղբյուրի համայնքապե-տարան
18	Խառատյան Անուշավան	Բարձր.		ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ
19	Սողոմոնյան Վարդան	Բարձր.		ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ

Կոլեգիալ կառավարման մարմինը 2022-2023 ուսումնական տարում գումարել է 5 /հինգ/ նիստ, որի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը՝

1. 2022 թվականի օգոստոսի 30-ին՝ Խնկոյանի դպրոցում

   ա/ դպրոցների 2022-2023 ուսումնական տարվա ծախսերի նախահաշվի հաստատում,

   բ/ դպրոցների հաստիքացուցակների հաստատում,

   գ/ դպրոցների ներքին կարգապահական կանոնների հաստատում,

   դ/ դպրոցների ներքին գնահատման հաշվետվությունների քննարկում:
2. 2022 թվականի հոկտեմբերի 9-ին՝ Լուսաղբյուրի դպրոցում

   ա/ միացյալ խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն,

   բ/ միացյալ խորհրդի աշխատակարգի հաստատում:
3. 2022 թվականի դեկտեմբերի 9-ին՝ Սարալանջի դպրոցում

   ա/ դպրոցների 2022 թվականի ծախսերի նախահաշվի փոփոխության նախագծի քննարկում,

   բ/ դպրոցների 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի նախագծի քննարկում,

   գ/ Լուսաղբյուրի դպրոցի ուսուցիչներին պարգևատրելու մասին,

դ/ դպրոցների 2023 թվականի տարիֆիկացիոն ցուցակներին հավանություն տալու մասին:

4. 2023 թվականի ապրիլի 3-ին՝ Լուսաղբյուրի դպրոցում

   ա/ 2023 թվականի 1-ին եռամսյակի ֆինանսական գործունեության հաշվետվության քննարկում,

   բ/ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համար աջակցության կենտրոնին դիմելու մասին:

5. 2023 թվականի հուլիսի 22-ին՝ Խնկոյանի դպրոցում

   ա/ 2023 թվականի 2-րդ եռամսյակի ֆինանսական գործունեության հաշվետվության քննարկում:

Դպրոցի տնօրենից և կոլեգիալ կառավարման մարմնից բացի դպրոցի կառավարման մարմիններն են հանդիսանում հիմնադիրը, նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը, իսկ տնօրենի ընտրությունից հետո նաև վարչատնտեսական մասի համակարգողը:

Դպրոցի տնօրենի և կառավարման մարմինների համագործակցության ուղղությունները նախատեսված են դպրոցի կանոնադրությամբ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
Դպրոցի ղեկավարումն իրականացվում է հիմնադրի և նախարարության կողմից ընդունված իրավական ակտերի պահանջներին համապատասխան	Կառավարման խորհրդի անդամների մի մասի ներկայությունը նիստերին ձևական բնույթ է կրում և նրանք ակտիվ մասնակցություն չունեն քննարկվող հարցերին
Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կառավարման խորհրդի բոլոր նիստերին, ինչպես նաև մասնակցում է տարածքային կառավարման մարմնի կողմից հրավիրված խորհրդակցություններին	Կառավարման խորհրդի անդամների մեծ մասը չունի բարձրագույն կրթություն, և իրենց պարտականություններին ու իրավունքներին տիրապետում են մասնակիորեն

Կառավարման խորհրդի նիստերը գումարվել են յուրաքանչյուր եռամսյակում՝ ըստ կարգի	Կառավարման խորհրդի դերակատարությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործում սահմանափակվում է միայն այդ հաշվետվությունների ֆորմալ ներկայացմամբ կառավարման խորհրդի նիստերին
Կառավարման խորհրդի նիստերն անցկացվել են հերթականությամբ՝ ընդգրկելով կազմի բոլոր դպրոցները	
Կառավարման խորհրդի նիստերն արձանագրվում են առանձին մատյանում, իսկ տնօրենի կողմից ցուցաբերվում է հետևողականություն ընդունած որոշումների կատարման նկատմամբ	

4. ՀԱՄԱՅՆՔԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը ՀՀ Լոռու մարզի Սարալանջ գյուղի միակ դպրոցն է, և ապահովում է գյուղի երեխաների կրթության ստացման գործընթացը: Գյուղում կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Սոցիալական աջակցության ծրագրեր համայնքի կողմից վերջին տարիներին չեն իրականացվել: Դպրոցի նախաձեռնությամբ կազմակերպված մշակութային միջոցառումներին երբեմն մասնակցում են նաև համայնքի ներկայացուցիչներ: Թույլ է դպրոցի և համայնքի կապը:

Ըստ դպրոցի կանոնադրության, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում դպրոցում ձևավորվում են ծնողական և աշակերտական խորհուրդներ, սակայն քանի որ դպրոցում կրթություն են ստանում ընդամենը 11 աշակերտներ, խորհուրդները կրում են միայն ֆորմալ բնույթ, և ծնողների ու աշակերտների հետ իրականացվում են անհատական հաղորդակցություններ: Ծնողների կողմից նախաձեռնությունները շատ ցածր են, հիմնականում ծնողները մասնակցում են դպրոցի կողմից նախաձեռնված միջոցառումներին:

Դպրոցում պահպանվում են ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ընդունված իրավական ակտերի պահանջները: Դպրոցը հանձնարարականներ ստանում է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմից, որոնք կատարում է սահմանված ժամկետներում:

Դպրոցը համագործակցում է կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, գնահատման և թեստավորման կենտրոնի, կրթության զարգացման և նորարությունների ազգային կենտրոնի, Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի և այլ կազմակերպությունների հետ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
Ապահովված է գյուղի բոլոր երեխաների կրթության ստացման իրավունքը	Թույլ է համայնքի հետ կապը

Դպրոցում պահպանվում են ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ընդունված իրավական ակտերի պահանջները	Ծնողական նախաձեռնությունները գրեթե բացակայում են
Դպրոցը համագործակցում է ԿՏԱԿ-ի, ԿՀՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՎՊՀ-ի հետ	Սոցիալական աջակցության ծրագրեր համայնքի հետ չեն իրականացվում

5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները բնութագրող ցուցանիշները ներկայացված են հետևյալ աղյուսակներում՝

Հ/Հ	Ազգանուն, անուն	Դասավանդող առարկա	Դպրոցում աշխատում է	Աշխատան-քային պայմանագիր	Կրթություն
1	Հակոբյան Վազգեն	Տնօրենի ԺՊ, Ուսուցիչ ֆիզկուլտուրա	2013 թ.	հիմնական	բարձրագույն
2	Նալբանդյան Արթուր	Զինղեկ	2023 թ.	հիմնական	բարձրագույն
3	Գրիգորյան Մարգարիտա	Դասվար	2003 թ.	հիմնական	բարձրագույն
4	Եղիազարյան Նարինե	Ուսուցիչ հայոց և գրակ.	2003 թ.	հիմնական	բարձրագույն
5	Դավրուզյան Լիլիա	Ուսուցիչ անգլերեն	2022 թ.	հիմնական	բարձրագույն
6	Դավթյան Օֆիկ	Ուսուցիչ մաթեմ.	2021 թ.	հիմնական	բարձրագույն
7	Քալաշյան Տաթևիկ	Ուսուցիչ պատմություն	2012 թ.	հիմնական	բարձրագույն
8	Եղիկյան Լևոն	Ուսուցիչ աշխարհագր.	2016 թ.	համատեղ.	բարձրագույն
9	Օհանյան Հերմինե	Ուսուցիչ քիմիա կենսաբան.	2017 թ.	համատեղ.	բարձրագույն
10	Ղազարյան Ռայա	Ուսուցիչ ֆիզիկա	2017 թ.	հիմնական	բարձրագույն
11	Դարբինյան Վաղարշակ	Ուսուցիչ ռուսաց լեզու	2022 թ.	հիմնական	բարձրագույն
12	Ալավերդյան Նոնա	Ուսուցիչ շախմատ	2021 թ.	հիմնական	բարձրագույն

13	Աննա Մաթևոսյան	Ուսուցիչ տեխնոլոգիա	2023 թ.	համատեղ.	բարձրագույն
14	Մարիամ Չարչյան	Ուսուցիչ ինֆորմատ.	2023 թ.	հիմնական	բարձրագույն
15	Զաքարյան Մարինե	Ուսուցչի օգնական, դասվար	2018 թ.	հիմնական	բարձրագույն

Հ/Հ	**Ազգանուն, անուն**	**Մասնագիտական ստաժ**	**Պարտադիր վերապատրաստումներին մասնակցություն**	**Կամավոր ատեստավորում**
1	Հակոբյան Վազգեն	10 տարի	2022թ.	
2	Նալբանդյան Արթուր	4 ամիս		
3	Գրիգորյան Մարգարիտա	20 տարի	2022թ.	
4	Եղիազարյան Նարինե	20 տարի	2021թ.	
5	Դավրուզյան Լիլիա	5 տարի		
6	Դավթյան Օֆիկ	55 տարի		
7	Քալաշյան Տաթևիկ	11 տարի	2021թ.	
8	Եղիկյան Լևոն	7 տարի	2023թ.	
9	Օհանյան Հերմինե	15 տարի	2023թ.	2023թ.
10	Ղազարյան Ռայա	25 տարի	2022թ.	
11	Դարբինյան Վաղարշակ	1 տարի		
12	Ալավերդյան Նոնա	3 տարի		

13	Աննա Մաթևոսյան	8 տարի	2023թ.	
14	Մարիամ Չարչյան	1 տարի		
15	Զաքարյան Մարինե	5 տարի	2022թ.	

Հ/Հ	**Տարիքային միջակայք**	**Մանկավարժների թիվը**
1	25 – 35 տարեկան	5
2	36 – 45 տարեկան	6
3	46 – 55 տարեկան	1
4	56–ից բարձր տարեկան	3
Ընդամենը		**15**

Բարձրագույն կրթություն ունեն մանկավարժական համակազմի բոլոր 15 աշխատակիցները, կամ ընդհանուր կազմի 100 %-ը:

Ըստ մասնագիտության դասավանդում են մանկավարժական համակազմի բոլոր 15 աշխատակիցները, կամ ընդհանուր կազմի 100 %-ը:

Մանկավարժական համակազմում տարակարգ կամ գիտական կոչում ունեցող մանկավարժներ չկան:

Վերջին 3 տարում պարտադիր վերապատրաստում են անցել մանկավարժական կազմի 9 աշխատակիցներ, կամ ընդհանուր կազմի 60 %-ը:

Մանկավարժական համակազմի ՏՀՏ կարողունակությունները ներկայացված են զարգացման ծրագրի 6-րդ բաժնում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**
Դպրոցում դասավանդում է կամավոր ատեստավորումն անցած մեկ մանկավարժ	Կամավոր ատեստավորմանը մասնակցությունը բավականին ցածր է

Բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն կրթություն	ՏՀՏ կարողունակությունների ավելացմանն ուղղված մասնագիտական դասընթացներ կամ վերապատրաստումներ քիչ են կազմակերպվում
Մանկավարժական կազմի հիմնական մասը երիտասարդ տարիքի են	Թափուր հաստիքները հիմնականում համալրվում են համատեղությամբ
Մանկավարժական համակազմի գրեթե բոլոր անդամներն կարողանում են կիրառել ՏՀՏ գործիքներ	Տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան դպրոցում և ուսուցիչների մոտ բացակայում է հետաքրքրությունը որակավորումների նկատմամբ
Տնօրենի կողմից բոլոր ուսուցիչներին տրամադրվում է մասնագիտական կարողությունները զարգացնելու համար անհրաժեշտ օգնություն	

6. ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում առկա են համակարգչային հետևյալ սարքավորումները՝

1. Ստացիոնար համակարգիչ 3 /երեք/ հատ, որոնցից մեկ օգտագործվում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար, մեկը՝ վարչական, կառավարչական աշխատանքների համար, իսկ մեկը ծրագրային խնդիրներով պայմանավորված չի աշխատում:
2. 2021 թվականի «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից դպրոցին նվիրաբերվել է 1 /մեկ/ դյուրակիր համակարգիչ և 1 /մեկ/ պրոյեկտոր, որոնք ևս օգտագործվում են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:
3. 1 /մեկ/ պատճենահանող և 2 /երկու/ տպիչ սարքավորում, որոնք օգտագործվում են ինչպես կառավարման, վարչատնտեսական գործունեության, այնպես էլ ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ կիրառում են 11 ուսուցիչներ կամ ընդհանուր ուսուցչական կազմի 73,3 %:

Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների նվազագույն գործիքակազմին տիրապետում են 14 ուսուցիչներ կամ ընդհանուր ուսուցչական կազմի 93,3 %:

Ուսուցանման ընթացքում ինտերակտիվ մեթոդներ կիրառում են 8 ուսուցիչներ կամ ընդհանուր ուսուցչական կազմի 53,3 %:

Այն սովորողները, որոնք տանը չունեն համակարգիչ, ըստ անհրաժեշտության ինքնակրթության համար հնարավորություն ունեն օգտվել դպրոցի համակարգչից:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
Էլեկտրոնային մատյանները լրացվում են բոլոր ուսուցիչների կողմից	2 ուսուցիչներ էլեկտրոնային մատյանները լրացնելիս օգտվում են օպերատորի կամ գործընկերների օգնությունից
Տեղեկատվական տեխնոլոգիաների նվազագույն գործիքակազմին տիրապետում են գրեթե բոլոր	Ուսուցման ինտերակտիվ մեթոդներին տիրապետում են ուսուցիչների կեսը, այս ցուցանիշը կարիք ունի

ուսուցիչները	բարելավման
Ուսուցիչները էլեկտրոնային տարբերակով կազմում են դասի օրական և թեմատիկ պլաններ	Ժամանակակից լաբորատորիաներ /բնագիտական, ինժիներական/ բացակայում են
Դպրոցն ունի կայքէջ	Դպրոցի պաշտոնական կայքը պատշաճ չի վարվում և կարիք ունի բովանդակության թարմացման, կառուցվածքի հստակեցման և տեղեկատվության պատշաճ կարգով և ժամկետներում հրապարակման
Լիազոր մարմնից էլեկտրոնային եղանակով ստացվում են հանձնարարականներ, ներկայացվում են պահանջվող տեղեկատվություններ, հաշվետվություններ	Համակարգչային տեխնիկան կարիք ունի նորոգման, արդիականացման, բացակայում են ժամանակակից ՏՀՏ սարքավորումները
Դպրոցում առկա է մշտական ինտերնետ կապ	
Դպրոցում ֆինանսատնտեսագիտական գործունեության հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային ծրագրով	

7. ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում սովորողների և դասարանների շարժը վերջին երկու ուսումնական տարիների հետ համեմատությամբ ներկայացված է աղյուսակում, որտեղ արձանագրվել է ինչպես դասարանների, այնպես էլ սովորողների թվաքանակի նվազում՝

Դասարան	Աշակերտների թիվը		
	2021-2022 ուսումնական տարի	2022-2023 ուսումնական տարի	2023-2024 ուսումնական տարի
1-ին դասարան	3	1	
2-րդ դասարան		3	
3-րդ դասարան	1		3
4-րդ դասարան	1	1	
5-րդ դասարան		1	1
6-րդ դասարան	3		1
7-րդ դասարան	3	3	
8-րդ դասարան	3	3	3
9-րդ դասարան		3	3
ԸՆԴԱՄԵՆԸ	**14**	**15**	**11**

2021-2022 ուսումնական տարում դպրոցում 9-րդ դասարան չի եղել, ուստի աշակերտների կրթության որակը և առաջադիմությունը բնութագրող ցուցանիշները կներկայացվեն միայն 2022-2023 ուսումնական տարվա համար:

Առարկա	Աթյան Գևորգ	Մկրտչյան Աննա	Պետրոսյան Գոռ
Հայոց լեզու	6	9	8
Գրականություն	7	9	8
Հանրահաշիվ	6	9	7
Հայոց պատմություն	5	9	7

Կենսաբանություն	7	9	8
Ռուսաց լեզու	6	9	7
Ֆիզկուլտուրա	9	9	9
Երկրաչափություն	6	9	7
Քիմիա	7	9	8
Անգլերեն	6	8	7
Հայաստանի աշխարհագրություն	6	9	8
Համաշխարհային պատմություն	5	9	7
ՀԵՊ	5	9	8
Հասարակագիտություն	6	9	7
ՆԶՊ	9	9	9
Ֆիզիկա	6	9	8
Ինֆորմատիկա	7	9	8

Աշակերտների ավարտական քննության գնահատականները 2022-2023 ուսումնական տարում՝

Առարկա	**Աթյան Գևորգ**	**Մկրտչյան Աննա**	**Պետրոսյան Գոռ**
Հայոց լեզու (20 բալանոց)	13	19	16
Գրականություն (20 բալանոց)	15	20	19
Մաթեմատիկա (20 բալանոց)	12	16	14
Հայոց պատմություն (20 բալանոց)	8	18	13
Բնագիտական Կենսաբանություն (20 բալանոց)	14	16	12

Օտար լեզու Ռուսաց լեզու (20 բալանոց)	9	17	15
Ֆիզկուլտուրա (10 բալանոց)	9	9	9

Սովորողների առաջադիմությունը 2022-2023 ուսումնական տարում կազմել է 100 %, իսկ կրթության որակը՝ 27,2 %:

Դպրոցն օլիմպիադաներին կամ մարզային, հանրապետական այլ մրցույթներին մասնակիցներ չի ունեցել, իսկ հիմնական դպրոցն ավարտողներն իրենց կրթությունը շարունակում են մարզի այլ միջնակարգ ուսումնական հաստատություններում, ավագ դպրոցներում կամ վարժարաններում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**
Բարձր է սովորողների առաջադիմությունը, որը պայմանավորված է նչանց հետ իրականացվող անհատական աշխատանքներով	Մարզային և հանրապետական օլիմպիադաներին մասնակցությունը բացակայում է
Քննական և ավարտական գնահատականների համադրությամբ արդյունքների էական շեղումներ չկան	Դպրոցում չեն գործում արտադասարանական խմբակներ

8. ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում ստեղծված է բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ խրախուսվում է բազմակարծությունը՝ տարբեր կարծիքներ, առաջարկություններ, առարկություններ քննարկումներին մասնակիցների կողմից, դպրոցում ապահովված է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ներգրավվումն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը, կիրառվում են որոշումների կայացման մասնակցային սկզբունքը:

Դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ հաշվառված չեն: Պարբերաբար իրականացվում է մոնիթորինգ սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման համար, և սովորողների փոքր թիվը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր սովորողին ցուցաբերել անհատական մոտեցում, ինչի արդյունքում ուսումնառությունից հետ մնացող սովորողներ ևս չկան դպրոցում:

Դպրոցում խորհրդակցական մարմիններից որպես այդպիսին լիարժեք գործունեություն է իրականացնում միայն մանկավարժական խորհուրդը, իսկ աշակերտների և ծնողների հետ իրականացվում է անհատական աշխատանքներ:

Դպրոցում պարբերաբար կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, որոնց մասնակցություն են ունենում դպրոցի բոլոր աշակերտները:

Դպրոցում բոլոր աշակերտները գտնվում են աշխատակազմի անմիջական հսկողության տակ, հաշվի առնելով նաև, որ աշխատակազմի թիվը գերազանցում է աշակերտների թվին գրեթե 2 անգամ, ինչի արդյունքում դպրոցում բացառված են բռնության, օտարման կամ հալածանքի դրսևորումները: Դպրոցի աշակերտների միջև ձևավորված է ջերմ, բարիադրացական հարաբերություններ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կառավարման միացյալ խորհրդի բոլոր նիստերին	Նախաձեռնություններով հիմնականում հանդես է գալիս դպրոցը

Դպրոցում բացառված են բռնության, օտարման, հալածանքի դրսևորումները, միաժամանակ իրականացվում են նաև կանխարգելման միջոցառումներ	Սովորողների մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ գրեթե չեն իրականացվում, քանի որ դպրոցը տալիս է հիմնական կրթություն, իսկ սովորողների նախասիրությունները հիմնականում ձևավորվում են ավագ դպրոցում
Ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցներն ազատ են իրենց դիրքորոշումները, առաջարկությունները կամ առարկությունները ներկայացնելիս	
Դպրոցում ձևավորված է սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ, ուսուցիչ-ծնող առողջ, ջերմ հարաբերություններ	

9. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժ Մարինե Զաքարյանը, իր նախաձեռնությամբ 2023 թվականին մասնակցել է Վանաձորի պետական համալսարանի կողմից կազմակերպված վերապատրաստումներին հանրակրթության նոր չափորոշչի ներդրումը թեմայով՝ երաժշտություն և կերպարվեստ առարկաների շրջանակում:

Մանկավարժ Նոնա Ալավերդյանը 2023 թվականին մասնակցել է ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակի վերապատրաստումներին:

Մանկավարժական ամբողջ համակազմը 2023 թվականին մասնակցել է ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստմանը, որը վերաբերում էր հանրակրթության նոր չափորոշչի ներդրմանը:

Դպրոցում աշխատակազմի խրախուսման և արժևորման համակարգ չի գործում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
Մանկավարժների կողմից ինքնակրթությամբ զբաղվելու համար առկա է որոշակի նախաձեռնողականություն, իրականացվում են հետազոտություններ,	Ցածր է կամավոր ատեստավորմանը մասնակցությունը, մասնակցել է մեկ ուսուցիչ, ով դպրոցում աշխատում է համատեղությամբ
Ուսուցիչների կողմից միմիանց օգնելու ցանկության առկայություն	Դպրոցում աշխատակազմի խրախուսման կամ արժևորման համակարգ չի գործում
Մանկավարժների կողմից վերապատրաստումներին պարբերաբար մասնակցություն	Դպրոցի տարեկան նախահաշվում խրախուսման համար ֆինանսական միջոցներ չեն պլանավորվում
Մանկավարժները պատշաճ կարգով կազմում են օրական դասի և թեմատիկ պլաններ, որոնք սահմանված կարգով հաստատվում են տնօրենի կողմից	Վերջին տարիներին դպրոցում խրախուսված մանկավարժներ չկան

	Մանկավարժների մասնագիտական զարգացման համար դպրոցի տարեկան բյուջեով հատկացված միջոցները փոքր են

10. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի ծախսերի վերլուծությունից պարզ է դառնում, որ և՛ պլանավորված, և՛ փաստացի ծախսերը 2023 թվականին 2022 թվականի համեմատ աճել են համապատասխանաբար 3638,3 և 2090,1 հազարական դրամներով, ինչը նշանակում է, որ 2023 թվականի տարեկան արդյունքներով դպրոցի բյուջեի մնացորդն աճել է շուրջ 1,5 մլն դրամով: 2023 թվականին ծախսային բոլոր ուղղություններով հիմնականում արձանագրվել է նվազում, բացառությամբ աշխատավարձի և հավելավճարների հոդվածի: Առավել մանրամասն ծախսերի ուղղությունները և փաստացի ու պլանավորված ծախսերի համեմատությունը ներկայացված է ստորև:

/հազար դրամ/

Հ/Հ	Ծախսային հոդված	2022 թվական		2023 թվական		Տարբերություն	
		Պլան	Փաստ	Պլան	Փաստ	Պլան	Փաստ
1	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	19471,0	19076,9	24234,4	22717,6	4763,4	3640,7
2	Էներգետիկ ծառայություններ	1150,0	954,8	950,0	524,8	-200,0	-430,0
3	Ծառայողական գործուղումների գծով ծախսեր	694,4	690,2	972,4	923,2	278,0	233,0
4	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	96,0	96,0	0,0		-96,0	-96,0
5	Տեղեկատվական ծառայություններ	64,8	43,0	55,0	20,0	-9,8	-23,0
6	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	430,0	391,8			-430,0	-391,8
7	Մասնագիտական ծառայություններ	1100,0	1010,0	1020,0	1012,1	-80,0	2,1

8	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	40,0		30,0		-10,0	0,0
9	Գրասենյակային նյութեր և հագուստ	100,0	63,9	120,0	45,1	20,0	-18,8
10	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	200,0	115,0	200,0	74,3	0,0	-40,7
11	Հատուկ նպատակային այլ նյութեր	750,0	720,2	400,0	32,3	-350,0	-687,9
12	Պարտադիր վճարներ	50,0	30,4	56,7	12,2	6,7	-18,2
13	Վարչական սարքավորումներ	244,0	70,0			-244,0	-70,0
14	Նախագծահետազոտական ծախսեր	10,0	9,3			-10,0	-9,3
ԸՆԴԱՄԵՆԸ		**24400,2**	**23271,5**	**28038,5**	**25361,6**	**3638,3**	**2090,1**

Հ/Հ	Ցուցանիշ	2022 թվական	2023 թվական
1	Սովորող/ուսուցիչ հարաբերություն	0,8	0,73
2	Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերություն	2	1,83
3	Դասարանների միջին խտություն	2	2,2
4	Մեկ սովորողի հաշվով միջին ծախս	1939,3 հազար դրամ	2305,6 հազար դրամ
5	Միջին աշխատավարձ	75,7 հազար դրամ	90, 15 հազար դրամ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Համակողմանիորեն զարգացած, ազգային արժեքներ կրող, հայրենասեր, ազգային արժեքներ կրող, մրցունակ, մարդասիրական ոգով դաստիարակված քաղաքացու ձևավորում,
2. ՏՀՏ կիրառման ավելացում ուսուցման գործընթացում,
3. Մանկավարժների մասնագիտական կարողությունների ավելացում,
4. Սովորողների կրթության որակի, մնացորդային գիտելիքների բարձրացում,
5. Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովում,
6. Հանրակրթական նոր չափորոշիչներին համապատասխան կրթության կազմակերպում,
7. Համայնքի, ծնողների հետ համագործակցության ընդլայնմամբ կրթության որակի բարելավում,
8. Համակարգողի հետ համատեղ ուսումնական անվտանգ ֆիզիկական միջավայրի ստեղծում,
9. Դպրոցի գործունեության մշտական մոնիթորինգի արդյունքում նոր կրթական կարիքների բացահայտում, ձևակերպում և բավարարում:

2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Դպրոցն իր գործունեությունն իրականացնում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին համապատասխան, իսկ իրականացման ուղղությունները ներկայացված են զարգացման ծրագրի առկա իրավիճակի վերլուծության բաժիններում և նպատակադրումներում:

3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՈՒԺԻՆ

Դպրոցի շենքը կառուցվել է 1989 թվականին, մեկ հարկանի է և նախատեսված է մինչև 65 սովորողների համար: Շենքի ընդհանուր մակերեսը 252,0 քառակուսի մետր է, իսկ հողամասինը՝ 5380 քառակուսի մետր: Դպրոցը հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար հարմարեցված է մասնակիորեն:

Դպրոցում լաբորատորիաներ չեն գործում, սպորտային և հանդիսությունների դահլիճներ չկան, բացակայում է բուժկետ:

Դպրոցում առկա է գրադարան, որտեղ ժամանակակից գրականությամբ թարմացումներ լինում են քիչ քանակներով և պարբերականությամբ:

Դպրոցում առկա է 2 /երկու/ սանհանգույց՝ տղաների և աղջիկների համար, պահպանված են անհրաժեշտ սանիտարահիգենիկ նորմերը:

Դպրոցում գործում է վերանորոգված ճաշարան, որն ապահովված է անհրաժեշտ գույքով:

Դպրոցում ջեռուցումն իրականացվում է կենտրոնացված կարգով, դպրոցում ապահովվում է անհրաժեշտ ջերմաստիճանը, ձմռան ամիսներին իրականացվում է ջերմաստիճանի ամենօրյա դիտարկումներ:

Դպրոցում, բացի զարգացման ծրագրի 5-րդ բաժնում ներկայացված մանկավարժական կազմից առկա են նաև հետևյալ մարդկային ռեսուրսները՝

Ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմը	**Ծննդյան թիվը**	**Կրթությունը**	**Պաշտոնը**	**Դրույքային միավորը**
Բաբեյյան Կիմա (հիմնական) - գտնվում է ֆիզ. արձակուրդում	1992	բարձրագույն	հաշվապահ	0,75
Ժաննա Գրիգորյան- փոխարինող	1967	բարձրագույն	հաշվապահ	0,75
Գևորգյան Վարդանուշ (հիմնական) - գտնվում է ֆիզ. արձակուրդում	1998	միջին մասնագիտական	օպերատոր	1

Բալաբեկյան Էմմա-փոխարինող	1993	օպերատոր	օպերատոր	1
Անտոնյան Վարդ	1962	միջին մասնագիտական	Տեխնիկական աշխատող	1
Անտոնյան Նարեկ	1994	միջին մասնագիտական	Պահակ	1
Զաքարյան Ռազմիկ	1957	միջին մասնագիտական	Պահակ	1
Ալավերդյան Նոնա	1994	բարձրագույն	գրադարանավարուհի	0,5
Անտոնյան Վարդ	1962	միջին մասնագիտական	Ջեռուցող (սեզոնային 6 ամիս)	0,25
Թափուր է			բանվոր	0,75

ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակ
Ուսումնական գործընթացի կազմակերպման համար բավարար շենքային և նյութատեխնիկական բազայի ապահովում:

Խնդիրներ
1. Ըստ անհրաժեշտության շենքային պայմանների բարելավմանն ուղղված առաջարկությունների կազմում և ներկայացում համակարգողին:
2. Ըստ անհրաժեշտության նյութատեխնիկական բազայի վերազինմանն ուղղված առաջարկությունների կազմում և ներկայացում համակարգողին:

Գործողություններ	**Ռիսկեր**	**Ռիսկերը չեզոքացնող կամ մեղմող գործողություններ**	**Անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներ**	**Գործողությունների կատարման ժամանակացույցեր և պատասխանատուներ**	**Արդյունավետության գնահատում**
Պարբերաբար գնահատել ուսումնական գործընթացի վրա շենքային պայմանների անմիջական ազդեցություն ունեցող բացասական գործոնները և դրանց վերացման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ	Ֆինանսական ոչ բավարար միջոցների առկայություն	Աջակցել համակարգողին բացի դպրոցի բյուջեով նախատեսված միջոցներից գտնել նաև հովանավորներ, բարերարներ	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, բարերարների, հովանավորների աջակցություններ, պետական ծրագրեր, Անհրաժեշտ են կարիքների գնահատման հիմնավորումներ և ակնկալվող	Կարիքների գնահատում և համակարգողին առաջարկությունների ներկայացաում իրականացնել յուրաքանչյուր կիսամյակում, Պատասխանատու՝ Տնօրեն, համակարգող	Արձանագրված և բավարարված կարիքների համեմատություն

համակարգողին			արդյունքների հստակ գնահատում		
Պարբերաբար գնահատել ուսումնական գործընթացի արդյունավետության վրա ազդող նյութատեխնիկական միջոցների կարիքները և համակարգողին ներկայացնել առաջարկություն	Ֆինանսական ոչ բավարար միջոցների առկայություն	Աջակցել համակարգողին բացի դպրոցի բյուջեով նախատեսված միջոցներից գտնել նաև հովանավորներ, բարերարներ	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, բարերարների, հովանավորների աջակցություններ, պետական ծրագրեր, Անհրաժեշտ են կարիքների գնահատման հիմնավորումներ և ակնկալվող արդյունքների հստակ գնահատում	Կարիքների գնահատում և համակարգողին առաջարկությունների ներկայացաում իրականացնել յուրաքանչյուր կիսամյակում, Պատասխանատու՝ Տնօրեն, համակարգող	Արձանագրված և բավարարված կարիքների համեմատություն

Նպատակ **Պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթության գործընթացի կազմակերպում, ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառելիության ավելացում, կրթության որակի բարձրացում:**					
Խնդիրներ 1. Մանկավարժների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման կարողությունների ավելացում: 2. Հանրակրթական չափորոշիչների ճիշտ կիրառմամբ կրթության որակի բարելավում:					
Գործողություններ	**Ռիսկեր**	**Ռիսկերը չեզոքացնող կամ մեղմող գործողություններ**	**Անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներ**	**Գործողությունների կատարման ժամանակացույցեր և պատասխանատուներ**	**Արդյունավետության գնահատում**
Կազմակերպել դասընթացներ մանկավարժների ՏՀՏ գիտելիքներն ավելացնելու նպատակով	Տարեց մանկավարժները չունեն համակարգչային բավարար գիտելիքներ և դժվարությամբ են ընդունում նորարարությունները	Առավել փորձառու մասնագետներին, օպերատորին ներգրավվել դժվարություններ ունեցող մանկավարժներին օգնության ցուցաբերման գործընթացին	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, տեղեկատվական նյութեր, վերապատրաստումների նյութեր, էլեկտրոնային գրականություն	Յուրաքանչյուր ուսումնական տարի՝ ըստ գնահատված կարիքների, Պատասխանատու՝ տնօրեն, համակարգող	Կազմակերպված դասընթացները, դրանց մասնակիցները և արդյունքում ՏՀՏ կիրառող ուսուցիչների թվաքանակի փոփոխությունը

Մանկավարժական կոլեկտիվում ձևավորել միմիանց օգնության միջավայր՝ մանկավարժները փոխանակվեն իրեն փորձով և կարողունակություններով	Հաշվի առնելով, որ դպրոցում սովորողների թիվը փոքր է, դասերը կարծես թե լինեն անհատական պարապմունքներ և հաճախ մանկավարժները սահմանափակվում են միայն դասագրքերով ուսուցման իրականացմամբ	Մանակավարժների շրջանում հաճախակի կազմակերպել քննարկումներ, նորարարություններին ծանոթացման միջոցառումներ	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, անհրաժեշտ միջոցներն են համակարգչային տեխնիկա, էլեկտրոնային նյութեր, համակարգչային ծրագրեր	Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում, շարունակական, Պատասխանատու՝ տնօրեն	Իրականացված դասալսումներ ուսուցիչների կողմից, կազմակերպված հանդիպումներ, քննարկված հարցեր և արդյունքում ուսուցիչների կարողունակությունների դինամիկան
Վերահսկել ուսուցման գործընթացի՝ հանրակրթության նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան իրականացումը	Մանկավարժների կողմից ուսուցման ավանդական մեթոդներով կազմակերպում և ուղղակի գնահատման համապատասխանեցում նոր չափորոշիչներին	Պարբերաբար դասալսումների իրականացում, խնդիրների բացահայտում, մեթոդական օգնությունների տրամադրում	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, անհրաժեշտ է նոր չափորոշիչները, չափորոշիչների կիրառման ուսուցանող նյութեր, սովորողների կարողունակությունների գնահատման գործիքներ,	Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում, շարունակական, Պատասխանատու՝ տնօրեն	Նոր չափորոշչի կիրառելիության համար իրականցված վերապատրաստումներ, մասնակիցներ, աշակերտների կողմից կատարված նախագծային աշխատանքներ, չափորոշիչներով սահմանված

			էլեկտրոնային ծրագրեր՝ ցուցանիշներն ամփոփելու համար		վերջնարդյունքների և կարողունակությունների ապահովում
Պարբերաբար իրականացնել դասալսումներ	Դասալսումներն իրականացվում են պարբերաբար տնօրենի կողմից, և այս ուղղությամբ կարծես թե ռիսկեր չկան		Ֆինանսական և էական նյութատեխնիկական միջոցներ չեն պահանջվում	Յուրաքանչյուր ամիս, շարունակական, Պատասխանատու՝ տնօրեն	Դասալսումների թիվը և դրա դինամիկան, բարձրացված խնդրահարույց հարցերը
Ուսուցման գործընթացում հայտնաբերված թերությունները քննարկել մանկավարժական խորհրդում և մանկավարժներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն	Բարձրացված խնդիրների նկատմամբ անտարբեր մոտեցում մանկավարժների կողմից, և թերությունների վերացմանն ուղղված գործողությունների չիրականացում	Արձանագրված թերությունների վերացման ժամանակացույցերի, միջոցառումների կազմում և հետևողական մոտեցում տնօրենի կողմից	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, անհրաժեշտ է մեթոդական ուղեցույցներ, հրամաններ, կարգեր	Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում, շարունակական, խնդիրներ արձանագրելուց հետո Պատասխանատու՝ տնօրեն	Քննարկված և լուծում ստացած հարցերի համեմատական

Նպատակ **Մանկավարժական կազմի ինքնակրթությանն աջակցում, մանկավարժական կազմի մասնագիտական որակների բարձրացում:**					
Խնդիրներ 1. Աշխատակազմի խրախուսման և արժևորման չափելի համակարգի ներդրում: 2. Աշխատակազմի ինքնակրթությամբ զբաղվելու համար անհրաժեշտ միջոցների ապահովում:					
Գործողություններ	**Ռիսկեր**	**Ռիսկերը չեզոքացնող կամ մեղմող գործողություններ**	**Անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներ**	**Գործողությունների կատարման ժամանակացույցեր և պատասխանատուներ**	**Արդյունավետության գնահատում**
Տարեկան արդյունքներով խրախուսել աշխատակազմի բարձր արդյունքներ ապահովված անդամներին	Խրախուսման համար դրամական միջոցների բացակայություն	Ծախսերի տնտեսում, ֆինանսավորման այլ թույլատրելի աղբյուրների հայթայթում	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, թույլատրելի այլ աղբյուրներից ներգրավված միջոցներ, շնորհակալագրեր, պատվոգրեր	Ուսումնական տարվա արդյունքներն ամփոփելուց հետո, Պատասխանատու՝ տնօրեն	Խրախուսված աշխատողներ, Կիրառված խրախուսման և արժևորման տեսակներ
Աշխատակազմի	Արդյունքների	Համակարգի	Ֆինանսական	2024-2025	Խրախուսման

խրախուսման և արժևորման համար մշակել արդյունքների չափման իրատեսական գործիքներ	չափման ոչ թափանցիկ և արդյունավետ համակարգի կիրառում	թափանցիկության և արդյունավետության վերաբերյալ հարցումների իրականացում, և ըստ արդյունքների համակարգի վերանայում	միջոցներ չեն պահանջվում, հարցաթերթիկներ, հաշվետվություններ, կատարողականներ,	ուսումնական տարում և յուրաքանչյուր ուսումնական տարի ենթարկել մոնիթորինգի, Պատասխանատու՝ տնօրեն	համակարգի առկայություն, Խրախուսման համակարգի թափանցիկություն, Խրախուսման համակարգում իրականացված վերանայումներ, համակարգի վերաբերյալ դժգոհություններ, ներկայացված առաջարկություններ
Աշխատակազմի ինքնակրթության զարգացման նպատակով պարբերաբար կազմակերպել քննարկումներ, մասնագիտական զեկուցումներ	Մանկավարժների կողմից ոչ խորքային հետազոտությունների, ուսումնասիրությունների իրականացում, քննարկումներին համացանցից բեռնված զեկուցումների ներկայացում	Հետազոտության թեմաների, ուղղությունների նախապես որոշում, քննարկում մանկավարժական խորհրդում	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, հետազոտություններ, մասնագիտական գրականություն, զեկույցներ, կարգեր, հրամաններ	Յուրաքանչյուր կիսամյակում առնվազն երեք անգամ, Պատասխանատու՝ տնօրեն	Ուսուցիչների կողմից պատրաստված հետազոտական աշխատաքներ, սեփական նախաձեռնությամբ վերապատրաստումներ,
Աջակցել	Ֆինանսական ոչ	Թույլատրելի այլ	Դպրոցի տարեկան	Յուրաքանչյուր	Ձեռքբերված

աշխատակազմին ինքնակրթությամբ զբաղվելու համար անհրաժեշտ տեղեկատվական նյութերով, գրականությամբ, հետազոտությունների իրականացման համար այլ նյութերով ապահովման հարցում	բավարար միջոցներ, լաբորատորիաների բացակայություն, գրադարանի ոչ բավարար համալրվածություն	աղբյուրներից ֆինանսական միջոցների ներգրավում, մոտակա դպրոցների հետ համագործակցության ստեղծում	բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, հետազոտություններ, մասնագիտական գրականություն, զեկույցներ, կարգեր, հրամաններ, դիդակտիկ, լաբորատոր նյութեր, սարքեր, համակարգիչներ	ուսումնական տարի, Պատասխանատու՝ տնօրեն, համակարգող	տեղեկատվական նյութեր, Հետազոտական աշխատանքներում աշխատակազմի ներգրավվածության մակարդակ

Նպատակ **Դպրոցում սովորողների առողջապահական և սոցիալական շահերի պաշտպանված միջավայրի ապահովում, բոլոր գործընթացներում մասնակցային միջավայրի ապահովում:**					
Խնդիրներ 1. Սովորողների համար սոցիալ-մշակութային, բռնության, օտարման և հալածանքի կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպում: 2. Ուսումնական գործընթացում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորում:					
Գործողություններ	**Ռիսկեր**	**Ռիսկերը չեզոքացնող կամ մեղմող գործողություններ**	**Անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներ**	**Գործողությունների կատարման ժամանակացույցեր և պատասխանատուներ**	**Արդյունավետության գնահատում**
Դպրոցում ունենալ տարեկան միջոցառումների պլան-ժամանակացույց	Պլան-ժամանակացույցով նախատեսված միջոցառումների չանցկացում կամ թերի անցկացում	Յուրաքանչյուր ամիս տնօրենի կողմից պլան-ժամանակացույցով նախատեսված միջոցառումների և փաստացի կատարվածի համեմատում	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, պլան-ժամանակացույցեր, միջոցառումների ծրագրեր	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից 15-օրյա ժամկետում, Պատասխանատու՝ տնօրեն, դասղեկներ	Պլան-ժամանակացույցով ախատեսված միջոցառումների գրաֆիկով անցկացում, Բոլոր սովորողների ընդգրկվածություն միջոցառումներին
Բռնության, օտարման	Բռնության,	Ծնողների,	Ֆինանսական	Յուրաքանչյուր	Բռնության,

և հալածանքի կանխարգելման նպատակով համագործակցել ծնողական համայնքի, ՆԳՆ անչափահասների տեսչության և այլ կազմակերպությունների հետ	օտարման և հալածանքի կանխարգելման միջոցառումների չկարևորում ծնողների, աշակերտների կողմից	աշակերտների շրջանում պարբերաբար քննարկումների, հանդիպումների կազմակերպում	միջոցներ չեն պահանջվում, տեղեկատվական նյութեր, պաստառներ, էլեկտրոնային հոլովակներ	ուսումնական տարի, շարունակական, Պատասխանատու՝ տնօրեն, դասղեկներ	օտարման, հալածանքի դեպքերի առկայություն կամ բացակայություն, Դրանց կանխարգելման համար իրականացված միջոցառումներ, Համագործակցություն այլ կառույցների հետ, «Կարգապահ աշակերտ» և նմանատիպ մրցույթների անցկացում, Սովորողների կողմից պաստառների պատրաստում բռնության կանխարգելման թեմաներով

Մասնակցել կառավարման և մանկավարժական խորհուրդների բոլոր նիստերին, պարբերաբար մասնակցել խորհրդակցական մյուս մարմինների նիստերին	Խորհուրդների հետ ոչ բավարար համագործակցություն, խորհրդակցական մարմինների ձևական բնույթ	Հաշվի առնելով սովորողների քիչ թիվը գործընթացների նկատմամբ ամենօրյա վերահսկողության հնարավորություն և իրականացում	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, արձանագրություններ, հանդիպումների օրակարգեր, հաշվետվություններ	Յուրաքանչյուր ուսումնական տարի, շարունակական, Պատասխանատու՝ տնօրեն, կառավարման և խորհրդակցական մարմինների ղեկավարներ	Հրավիրված նիստերին մասնակցության աստիճան, Ներկայացված առաջարկություններ ի ընդունման աստիճան, Միջոցառումներին սովորողների ներգրավվածության աստիճան,
Ուսումնական գործընթացի մասնակիցների համար ստեղծել իրենց նախաձեռնությունները, առաջարկությունները, առարկությունները ներկայացնելու համար բարենպաստ միջավայր	Ուսումնական գործընթացի մասնակիցների կողմից ուսումնական գործընթացի բարելավման նկատմամբ որ հետևողական մոտեցում	Հաշվի առնել բոլոր առաջարկությունները, կարծիքները, առարկությունները և որոշումները կայացնելիս առաջնորդվել բազմակարծիք և մասնակցային միջավայրի ապահովման սկզբունքներով	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները կորոշվեն ըստ ներկայացված առաջարկությունների կատարման համար անհրաժեշտ միջոցների	Մշտապես, Պատասխանատու՝ տնօրեն	Ուսումնական գործընթացի մասնակիցների կողմից բարձրացված, քննարկված, և ընդունված հարցեր, Ուսումնական գործընթացի մասնակիցների կողմից դպրոցի կառավարման, որոշումների

					կայացման թափանցիկության, մասնակցայնության վերաբերյալ հարցումներ, Առավել բացասական դիրքորոշում ունեցող կողմերի հետ իրականացված լրացուցիչ քննարկումներ

Նպատակ **Դպրոցի կապի ամրապնդում համայնքի, ծնողական համայնքի, գործընկերների և համագործակցող այլ կազմակերպությունների հետ:**					
Խնդիրներ 1. Սերտացնել կապը համայնքի հետ, համայնքին մասնակից դարձնել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին և ծրագրերին: 2. Ծնողական համայնքի հետ շարունակել ակտիվ համագործակցությունը: 3. Գործընկերների և համագործակցող այլ կազմակերպությունների հետ ընդլայնել համագործակցության ուղղությունները՝ ի նպաստ սովորողների համար բավարար ուսումնական միջավայրի ձևավորմանը:					
Գործողություններ	**Ռիսկեր**	**Ռիսկերը չեզոքացնող կամ մեղմող գործողություններ**	**Անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներ**	**Գործողությունների կատարման ժամանակացույցեր և պատասխանատուներ**	**Արդյունավետության գնահատում**
Համայնքի հետ համատեղ իրականացնել միջոցառումներ ինչպես դպրոցում, այնպես էլ համայնքի բնակիչների համար	Համայնքի կողմից դպրոցի նկատմամբ ոչ բավարար ուշադրություն	Տնօրենի կողմից համայնքի հետ համագործակցության նախաձեռնողականության ցուցաբերում	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, ծնողական, համայնքային հատկացումներ, միջոցառումների	Յուրաքանչյուր կիսամյակում առնվազն 2 անգամ, Պատասխանատու՝ տնօրեն, դասղեկներ	Կազմակերպված միջոցառումներ, դրանց մասնակցության աստիճան Մրցույթներ, մրցույթներին արձանագրված հաջողություններ

			ծրագրեր		
Համայնքի հետ իրականացնել սոցիալական ծրագրեր, ապահովել բոլոր երեխաների հիմնական կրթության ստացումը	Սոցիալական ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցների սղություն	Թույլատրելի այլ աղբյուրներից ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությամբ գործողությունների իրականացում	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, համայնքային հատկացումներ, սոցիալական ծրագրեր	Յուրաքանչյուր ուսումնական տարի, Պատասխանատու՝ տնօրեն	Իրականացված սոցիալական ծրագրեր, կրթություն չստացող երեխաներ
Ծնողներին մշտապես մասնակից դարձնել իրենց երեխաների կրթության կազմակերպման գործընթացին, կազմակերպել այցեր, էքսկուրսիաներ	Ծնողների ծանրաբեռնվածություն իրենց աշխատանքում և առօրյա հոգսերում	Աշակերտների փոքր թիվը հնարավորություն է տալիս դասղեկներին շաբաթական մի քանի անգամ խոսել ծնողների հետ և համատեղ իրականացնել աշակերտների ուսումնադաստիաժրակչական աշխատանքների կազմակերպումը	Դպրոցի տարեկան բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, ծնողական հատկացումներ, այցերի, էքսկուրսիաների ծրագրեր, աշակերտների համար ճանաչողական նյութեր	Յուրաքանչյուր կիսամյակում առնվազն 2 անգամ, Պատասխանատու՝ տնօրեն, դասղեկներ, ծնողական խորհրդի նախագահ	Կազմակերպված այցեր, միջոցառումներ, ծնողների մասնակցության աստիճան
Ընդլայնել համագործակցող	Դպրոցի կողմից համագործակցություն	Տնօրենի կողմից հետևողական	Դպրոցի տարեկան բյուջեով	Շարունակական, Պատասխանատու՝	Կնքված համագործակցութ

գործընկերների շրջանակը, ապահովել թափանցիկ և արդյունավետ համագործակցություն	ների չկարևորում	վերաբերմունք բոլոր գործընկերների հետ համագործակցության խորացման հարցում	նախատեսված ֆինանսական միջոցներ, համագործակցության ծրագրեր	տնօրեն	յան նոր պայմանագրեր և արդյունքում բավարարված որոշակի կրթական կարիքներ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմված է 5 /հինգ/ տարիների համար՝ 2024-2029 թթ. ժամանակաշրջանի համար, սակայն քանի որ վերջին տարիներին գյուղում էականորեն նվազել է ծնելիության մակարդակը՝ պայմանավորված երիտասարդների արտագաղթով, դպրոցում վտանգված է հաջորդ տարիներին դպրոցի՝ նոր աշակերտներով համալրումը, հետևաբար այս զարգացման ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր են էական վերանայումներ, ուստի յուրաքանչյուր ուսումնական տարվա մեկնարկին պետք է կազմել դպրոցի զարգացման գործողությունների պլան մեկ տարվա համար, որը յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներն ամփոփելուց հետո ըստ անհրաժեշտության կենթարկվի փոփոխությունների:

Յուրաքանչյուր գործողության իրականացման նկատմամբ վերահսկողության կիրականացվի համեմատելով դրանց իրականացման ժամկետները և արձանագրված արդյունքները՝ նախապես մշակված ժամանակացույցերի հետ, որի համար հիմք կծառայեն ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունները, դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունները, կոնկրետ գործողությունների իրականացմանը տնօրենի մասնակցությամբ, իսկ արդյունքները կամփոփվեն կառավարման խորհրդի կողմից՝ տնօրենի ներկայացրած հաշվետվության քննարկմամբ:

Կառավարման խորհրդին ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունները կներկայացվեն կիսամյակային կտրվածքով, իսկ զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունը և հաջորդ տարվա գործողությունների ծրագիրը հաշվետու ուսումնական տարվա ավարտից հետո մինչև հաջորդ ուսումնական տարվա մեկնարկը:

Հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության կողմից սահմանված ձևաչափերով:

Որպես հաշվետվության լրացման օրինակ դիտարկենք ՀՀ կառավարության կողմից հաստատված հաշվետվության գործող օրինակելի ձևաչափը և պայմանական տվյալներով լրացնենք մի քանի գործողությունների համար՝

Հ/Հ	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ
1	Դպրոցում ունենալ տարեկան միջոցառումների պլան-ժամանակացույց	Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում	Մինչև սեպտեմբերի 15	Իրականացվել են նախատեսված բոլոր միջոցառումները	Արձանագրվել են ժամկետների որոշակի շեղումներ, սակայն բոլոր միջոցառումներն իրականացվել են ուսումնական տարվա ընթացքում	Փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է	
2	Կազմակերպել դասընթացներ մանկավարժների ՏՀՏ գիտելիքներն ավելացնելու	Մանկավարժների մասնագիտական գիտելիքների աճ	Համաձայն նախապես կազմված պլանի	Իրականացվել է նախատեսված 2 դասընթացներից մեկը	Ֆինանսական միջոցների անբավարարություն	Դասընթացը նախատեսել հաջորդ ուսումնական տարում	

	նպատակով						
3	Համայնքի հետ իրականացնել սոցիալական ծրագրեր, ապահովել բոլոր երեխաների հիմնական կրթության ստացումը	Ապահովել յուրաքանչյուր երեխայի կրթության ստացումը	Ուսումնական տարվա ընթացքում	Գյուղի բոլոր երեխաները ստանում են կրթություն, համայնքի հետ այս տարի սոցիալական ծրագրեր չեն նախատեսվել	Շեղումներ չկան	Փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է	
4							
5							